

ՔԱՅԼԵՐ ԶԵՌՔԵՐԸ ԼՎԱՆԱԼՈՒ ԶԱՄԱՐ

Կանգնեցրե՛ք մանրէների տարածումը և պաշտպանե՛ք Ձեզ և մյուսներին հիվանդանալուց:



1. Թրջեք ձեռքերը տաք ջրով:



2. Տարածեք օճառի փրփուրը: Օճառը վերացնում է ճարպը, որի օգնությամբ մանրէները կաչում են Ձեր ձեռքերին:



3. Առնվազն 20 վայրկյան շփեք և տրորեք ձեռքերը: Ուժեղ շփեք և տրորեք Ձեռն դաստակները, ափերը, մատների արանքները, եղունգների տակերը և ձեռքերի հակառակ կողմերը: Օճառն ու տրորման գործողությունը մաքրում են Ձեր ձեռքերը մանրէներից:



4. Ձեռքերը մանրակրկիտ լվացեք տաք հոսող ջրով:



5. Ամբողջությամբ չորացրեք ձեռքերը մաքուր սրբիչով կամ թղթե սրբիչով: Ձեռքերը չորացնելուց հետո սրբիչն օգտագործեք ծորակն անջատելու համար: Օգտագործված թղթե անձեռոցիկը զգեք աղբամանը:

Եթե ձեռքի տակ չկա օճառ ու ջուր, օգտագործեք սպիրտային հիմքով ձեռքերի լվացման միջով: Սպիրտային հիմքով ձեռքերի լվացման միջոցները սովորաբար լինում են գելի կամ անձեռոցիկների տեսքով: Համոզվեք, որ արտադրանքը պարունակում է առնվազն 60% սպիրտ:

Սպիրտային հիմքով ձեռքի լվացման միջոց օգտագործելիս

- Գելով կամ անձեռոցիկով տրորեք ձեռքերի երկու կողմերը:
- Ձեռքերը միմյանց շփեք առնվազն 30 վայրկյան, մինչև դրանք ամբողջովին չորանան: